



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

01 հունիսի 2021 թվականի թիվ 112-Ս

ք. Երևան

«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2021 թվականի հունիսի 21-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 40 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս՝ հայտնաբերել է Օրենքի պահանջի խախտում, այն է՝ հեղինակագործված «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող) «Ազատություն ԹիՎի» տեսալսողական ծրագրի 2021 թվականի հունիսի 20-ի եթերում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ քարոզչության համար արգելված ժամանակահատվածում՝ ընտրությունների քվեարկության օրը քարոզչական կամ քարոզչությանը նպաստող նյութի հեռարձակման միջոցով սահմանված կարգի պահպանման վերաբերյալ դրույթների պահանջների խախտում:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2021 թվականի հունիսի 21-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից Հեռարձակողի գործունեության դիտարկման արդյունքների հիման վրա 2021 թվականի հունիսի 21-ին կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, որն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ հիմք է հանդիսանում վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց:

Արձանագրության մեջ մասնավորապես նշված է.

Սույն թվականի հունիսի 20-ին ժամը 11:29:13-ին հեռարձակվել է տեսանյութ «Պատիվ ունեն» դաշինքի վարչապետի թեկնածու Արթուր Վանեցյանի ընտրատեղամասում իր քվեարկության մասին: Այդ հարցազրույցի ընթացքում լրագրողը հարց է ուղղում, մեջբերում՝

«Միջազգային ուսումնասիրություններից մեկով Ձեր ռեյտինգը 76 % էր, ինչքան ձայն հավաքելու շանսեր էք գնահատում»: Վանեցյանը պատասխանում է, որ ինքը ծանոթ չէ և չի համարում, որ տվյալները ճիշտ են, նաև նշում է, որ բազմաթիվ խախտումների վերաբերյալ ահազանգեր կան, խոսում է նաև ձեռքակալությունների մասին: Լրագրողը հարց է տալիս աղմկահարույց ձայնագրության հետ կապված, որտեղ «Պատիվ ունեն» դաշինքի

պատգամավորության թեկնածու Աննա Մկրտչյանի հայրը Քասախում պարտադրում է չգնալ և չքվեարկել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության օգտին»: Վանեցյանը պատասխանում է «Որն է աղմկահարույց բան չկա, վարչապետի պաշտոնը մինչև այսօր բոլոր իշխանական լծակները օգտագործելով պահած կապիտուլյանտը երեկ առավոտյան մտել էր ուղիղ եթեր լռության օրը և խոսում էր ինչ-որ բաների մասին: Աննախաղեպ և աղմկահարույցն ու աննախաղեպը դա է»:

Արձանագրության մեջ նշված է նաև, որ նույն օրը ժամը 18:00:39-ից մինչև 18:43:51-ը եթեր է հեռարձակվել «Ազատություն լրատվական կենտրոն» լրատվական տեսալսողական հաղորդումը, որի ընթացքում ժամը 18:20:21-ից մինչև 18:22:35-ը եթեր է հեռարձակվել Լոռու մարզում տեղի ունեցած ընտրախախտման հետ կապված ռեպորտաժը՝ ընտրակաշառքի դեպքի վերաբերյալ, որի ընթացքում՝

- ժամը 18:20:59-ից մինչև 18:21:19-ը Հեռարձակողի լրագրողը հանդես է գալիս հետևյալ խոսքերով, մեջբերում.

«Սպիտակում հանրապետական մեծահարուստ որպես Դերժավայի Արկաղի հայտնի Արկաղի Համբարձումյանի որդին է «Պատիվ ունեմ» դաշինքի թեկնածու: Ստանիսլավ Համբարձումյանը դաշինքի ընտրական ցուցակի 14-րդ համարն է: Տեղեկություններ կան, որ հենց Համբարձումյանի ընտանիքին պատկանող թռչնաբուծական ֆաբրիկայի աշխատակիցն է եղել ընտրակաշառք առաջարկողը»:

Ռեպորտաժի այս հատվածում լրագրողի խոսքին զուգընթաց ժամը 18:21:08-ից մինչև ժամը 18:21:19-ը սկիզբից խոշոր պլանով, այնուհետև աստիճանաբար փոքրացնելով այն անընդմեջ ցույց է տրվում շենքին փակցված «Պատիվ ունեմ» դաշինքի թեկնածու Ստանիսլավ Համբարձումյանի պաստառը:

Նույն ռեպորտաժի ընթացքում՝ ժամը 18:22:25-ից մինչև 18:22:35-ը, լրագրողը անդրադարձել է Համբարձումյանների ընտանիքին պատկանող գույքին, մասնավորապես, մեջբերում.

«Նախկին պատգամավոր Արկաղի Համբարձումյանը ու իր պատգամավորության թեկնածու որդին բազմաթիվ ընկերությունների սեփականատեր են:

Այնուհետև տեսանյութում ցուցադրվում է Ստանիսլավ Համբարձումյանի կողմից որպես պատգամավորության թեկնածու հայտարարագրված սեփականության ցանկը»:

Ըստ արձանագրության՝ հունիսի 20-ին ժամը 18:00:39-ից մինչև 18:43:51-ը հեռարձակված «Ազատություն լրատվական կենտրոն» լրատվական հաղորդման ընթացքում՝ ժամը 18:15:12-ին լրատվականի մեկնաբանը նշում է, որ առավոտյան կրակել են պատգամավոր, այժմ Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների դաշինքի 1-ին համար Արման Բաբաջանյանի մեքենայի վրա: ժամը 18:15:58-ին մեկնաբանը նշում է, որ ոստիկանություն հաղորդում է ներկայացրել Շիրինյան-Բաբաջանյան դաշինքի վարչապետի թեկնածու Արման Բաբաջանյանը: Նա ահագանգում է սպանության փորձի մասին և այդ օրը հրավիրած հրատապ ասուլիսում Բաբաջանյանը հայտարարում է, որ դեպքը տեղի է ունեցել առավոտյան, իր տան մոտ, կրակել են իր Տոյոտա մակնիշի ավտոմեքենայի դիմապակուն, բարեբախտաբար թեկնածուն մեքենայում չի եղել: Հարևանի տեսախցիկն արձանագրել է կատարվածը, Բաբաջանյանի պնդմամբ այս ամենի պատճառն իրենց վարկանիշի բարձրացումն է, սակայն դա կրակոց է՝ ուղղված Հայաստանի ժողովրդավարությանը, հայտարարում են դաշինքի ներկայացուցիչները: Լրագրողի խոսքից անմիջապես հետո ցույց են տրվում Շիրինյան-Բաբաջանյան դաշինքի անդամներին:

Ժամը 18:17:23-ին լրատվականի մեկնաբանը նշում է.

«Դաշինքի 3-րդ համարը՝ փաստաբան Սեդա Սաֆարյանն ասաց, որ դեռ երեկ են ահազանգ ստացել այն մասին, որ իրենց ցուցակի առաջին երեք անդամները թիրախավորված են»:

Արման Բաբաջանյանը ասուլիսի ընթացքում (Ժամը 18:17:48-ից մինչև 18:18:15-ը) հայտարարել է, մեջբերում. *«Ընդհանրապես եթե շարունակեցին իրենց գործելաձևը կիսախտենք օրվա այս ամբողջ նորմերը և անվանապես կասենք ով ա էս ամեն ինչի հետևում կանգնած: Հատիկ-հատիկ գիտենք և ձեր տեղեկությունների հեղինակներին և այդ տեղեկությունները շրջանառող շրջանակներին, կգանք ձեր հետևից վաղը և վաղը նեթ ձեր ականջներից կբռնենք և կկանչենք պատասխանատվության, չկասկածեք վերից վար»:*

«Ազատություն լրատվական կենտրոն»-ի նույն տեսալսողական հաղորդման ընթացքում՝ Ժամը 18:19:05-ից ցուցադրվում է տեսանյութ, որտեղ լրատվականի մեկնաբանը նշում է, որ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գլխավորած «Հայաստան» դաշինքն էլ դիմել է ոստիկանություն՝ պահանջելով սեղմ ժամկետներում հայտնաբերել «Հայաստան» դաշինքի ղեկավարների նկատմամբ վիրավորանք և ասելություն պարունակող նյութեր պատրաստողներին, տարածողներին, պատվիրատուներին և անհապաղ բերման ենթարկել: Երևանի տարբեր հատվածներում թերթիկներ են տարածվել, որոնց վրա «Հայաստան» դաշինքի վարչապետի թեկնածուի լուսանկարն էր «Պրիվետ Ռոբ և հայասպան» գրություններով և կարմիր արյուն հիշեցնող հետքերով (Ժամը 18:19:24-ից մինչև Ժամը 18:19:30-ը): Ոստիկանությունում նյութեր են նախապատրաստվում, ձեռնարկվում են միջոցառումներ կատարվածի հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2021 թվականի հունիսի 23-ին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հեռարձակողը վարչական վարույթի շրջանակներում որևէ բացատրություն չի ներկայացրել Հանձնաժողով:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետի համաձայն՝ ընտրությունների նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում՝ տեսալսողական հաղորդումները հեռարձակվում են ընտրությունների մասին օրենսդրությանը համապատասխան.

Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը սահմանում են.

2. Ընտրությունների (հանրաքվեների) քվեարկության օրը և դրան նախորդող օրն արգելվում է հեռարձակել քարոզչական կամ քարոզչությանը նպաստող նյութ՝ տեղեկատվական, խմբագրական, փաստավավերագրական, հեղինակային կամ այլ հաղորդումների տեսքով կամ ցանկացած այլ ձևով նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչություն իրականացնելը:

3. Ընտրությունների (հանրաքվեների) քվեարկության օրը և դրան նախորդող օրը ուղիղ եթերի ժամանակ քարոզչություն հնչելու դեպքում Հեռարձակողը պատասխանատվության չի ենթարկվում, եթե քարոզչության հեղինակն ուղիղ եթերում զգուշացվել է

իրավախախտման մասին, իսկ կրկնակի քարոզչության դեպքում ուղիղ եթերը դադարեցվել է:

«Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝

«Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների, թեկնածուների գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 7-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ: Այդ ժամանակահատվածում քարոզչությունը ստորև անվանվում է նախընտրական քարոզչություն:

Քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչությունը հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների, ինչպես նաև տպագիր մամուլի, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների (այդ թվում՝ արբանյակային հեռարձակման ժամանակ) միջոցով արգելվում է»:

«Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությունը սահմանում է՝

Արգելվում է քվեարկության նախորդ օրը, ինչպես նաև քվեարկության օրը՝ մինչև ժամը 20.00-ն, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստատեսությամբ, ռադիոյով կամ տպագիր մամուլով թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքները, ինչպես նաև դրանց վերաբերյալ տեղեկատվություն հրապարակելը:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 12)-րդ կետի համաձայն Հանձնաժողովը՝ վերահսկում է Հեռարձակողների կողմից նախընտրական քարոզչության՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգի պահպանումը:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են՝

«8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները»:

Հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 27-ի թիվ 68-Ս որոշմամբ հաստատված «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանության» 8-րդ մասի 12-րդ կետի համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Հեռարձակողների կողմից հեռարձակված տեսալսողական ծրագրերը ուսումնասիրելիս, բացառությամբ Ընտրությունների մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքներին անվճար և վճարովի

կարգով տրամադրված եթերաժամանակի, դիտարկողը գնահատում է նաև՝ Ընտրությունների քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչական նյութի՝ տեղեկատվական, խմբագրական, փաստավավերագրական, հեղինակային կամ այլ հաղորդումների տեսքով կամ ցանկացած այլ ձևով նախընտրական քարոզչության իրականացման առկայության հանգամանքը:

Հանձնաժողովն ամրագրում է, որ Հեռարձակողը տեսալսողական տեղեկատվություն հեռարձակելիս պարտավոր է պահպանել Օրենքով, իսկ ընտրությունների ընթացքում նաև ընտրությունների մասին օրենսդրությամբ սահմանված տեսալսողական տեղեկատվությանը ներկայացվող պահանջները: Մասնավորապես՝ ընտրությունների մասին օրենսդրությամբ հստակ սահմանված է որ ընտրությունների քվեարկության օրը և դրան նախորդող օրն արգելվում է հեռարձակել քարոզչական կամ քարոզչությանը նպաստող նյութ՝ տեղեկատվական, խմբագրական, փաստավավերագրական, հեղինակային կամ այլ հաղորդումների տեսքով կամ ցանկացած այլ ձևով նախընտրական քարոզչություն իրականացնելը:

Վարչական վարույթի քննարկման նիստին մասնակցում էր նաև Հեռարձակողի ներկայացուցիչը, ով իր բացատրության մեջ նշեց, որ արձանագրության մեջ և նիստին հնչեցված Հեռարձակողի կողմից իրականացված իրավախախտումների վերաբերյալ փաստերը տեղի են ունեցել այն հաղորդումների ընթացքում, որոնք ուղիղ եթերով են հեռարձակվել և իրենք հնարավորություն չեն ունեցել և՛ տեխնիկական և՛ ժամանակային առումով թույլ չտալու նշված խախտումները:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ Օրենքով Հեռարձակողների համար պարտավորություն է սահմանված՝ ընտրությունների քվեարկության օրը և դրան նախորդող օրն որևէ քարոզչական կամ քարոզչությանը նպաստող նյութ չհեռարձակելը, որը՝ Հեռարձակողի կողմից չի պահպանվել և ավելին, ընտրությունների քվեարկության օրը՝ Հեռարձակողի լրատվական թողարկումների ընթացքում եթեր է հեռարձակվել կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների գործունեությունը լուսաբանող ռեպորտաժներ, ինչպես նաև ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ցուցակներում ընդգրկված ներկայացուցիչների մասնակցությամբ ռեպորտաժներ՝ քարոզչությանը նպաստող նյութի հեռարձակմամբ: Ինչպես նաև Հեռարձակողի մեկնաբանը ներկայացրել է ընտրություններին մասնակցող կուսակցությունների վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքները:

Փաստում ենք նաև, որ Հեռարձակողը Հանձնաժողովի կողմից հեղինակագործված իրավաբանական անձ է (Հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 03-ի թիվ 24-Ա որոշման համաձայն «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊ ընկերությանը տրվել է Հեռարձակողի կարգավիճակ (ՀՎN039 հեղինակագործման վկայական)), որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի, օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում են իրավական հետևանքներ և Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող

օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով և «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթի պահանջը:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 23-րդ կետերի համաձայն`

1) **տեսալսողական մեդիաձառայություն** մատուցող (այսուհետ` Հեռարձակող, լսողական մեդիաձառայություն մատուցող` Լսողական ծրագրեր հեռարձակող) Հայաստանի Հանրապետության հիմնադրած կազմակերպություն կամ կարգավորող պետական մարմնի հեղինակագործ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար:

23) **հեղինակագործում`** կարգավորող պետական մարմնի կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձին Հեռարձակողի կարգավիճակ տրվող փաստաթղթի տրամադրում:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն` կարգավորող պետական մարմինը` Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն` կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

Սույն օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, ապա կարգավորող պետական մարմնին իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած անձին` պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի և 22-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությամբ, «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 12-րդ կետերով, 56-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով` «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը` Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց.**

1. «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված տույժը՝ գրավոր նախազգուշացում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

01 հուլիսի 2021թ.
ք. Երևան